

- 5 Սողաց եւ ի գիրկն ելաւ՝
 շունն առնոյր զհոտն ի գիմէն :
 Աւձու հասիաթն է շատ ,
 Թէ քրննեն ճարտաբքըն մըտով ,
 Որպէս Մովսէսի եղեւ
 գաւազանն ի յաւձ դառնալով .
 Կամ զպըղընձի ըզաւձն
 ի ձողի ծայրըն կախելով .
 Որ էր նայ աւրինակ փրկչին
 ի խաչին նայ բարձրանալով :
- 10 Ջաւձէն շատ զըրոյց գիտեմ ,
 բայց չկարեմ գըրել հաւատով .
 Աւձն է իմաստուն խելաւք ,
 հրամայեաց Տէրըն կենարար .
 Աւձն է վիշապի ծընունդ՝
 Սողոմոն գրեաց զնայ հանձար .
 Աւձն որ ի ձուէտ ելաւ ,
 նա կոխէ զերկիր հաւասար :
 Իսկ նախանձ գտակ չարին
 զաւձն արար իւրըն բնակարան .
- 15 Պատրեաց նա զնախամայրն՝
 ճաշակմամբ պտղոյն զպատուիրան .
 Ագամ ձեռաւքն Եւայի ,
 'ւ ի յանձառ լուսոյն զըրկեցան .
 Տէրն եկեալ ձայնէր. ո՛ւր ես .
 նա լալով ասէր թէ մերկ կամ .
 Թագեան թղենեաւ սփածան
 'ւ ի նոյն ժամն ի դրախտէն ելան .
 Անմահ մնալոց էին ,
 բաց անկան եւ աղտեղեցան .
- 20 Մեռան ի դժոխքն իջան
 վեց հազար ամ արգիլեցան .
 Բանդեալ խաւար զընդանաւ
 չարաչար նոքա տանջեցան :